ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

Ս/Թ հունիսի 23-ին ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության ու փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքների նախաձեռնությամբ տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված ականավոր գիտնական, կուսակցական-պետական ու հասարակական նշանավոր գործիչ Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի ծննդյան 100 ամյակին։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանը։ Աշ. Հովհաննիսյանը, ասաց նա, սովորական գործիչ կամ գիտնական չէր։ Նա Անդրկովկասի հեղափոխական շարժումների ակտիվ մասնակիցն էր, կուսակցական և պետական ականավոր գործիչ, խորաթափանց գիտնական և ապրել է բուռն, բազմաբովանդակ կյանքով։ Այնուհետև Բ. Առաքելյանը համառոտակի անդրադարձավ Աշ. Հովհաննիսյանի կենսագրականին, նկատելով, որ նա անցել է հեղափոխական, պետական, կուսակցական և գիտական ստեղծագործական աշխատանքի մեծ, բարդ, բայց արգասավոր ուղի։ Նա մեծ էր իբրև հասարակական գործիչ, քաղաքացի և գիտնական։ Այդպիսին են լինում մեծերը։ Այդ առումով, վերջում նշեց Բ. Առաքելյանը, Աշ. Հովհաննիսյանի վաստակը և հիշատակը արժանի են խորին հարգանքի ու երախտագիտության։

Այնուհետև Ա. Գ. Հովհաննիսյանի կյանքին ու գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Բարխուդարյանը։ Նա ասաց, որ գործունեության ասպարեզ մտնելով XX դ. սկզբներին, Աշ. Հովհաննիսյանը հմտությամբ ու հաստատակամությամբ կարողացավ հեղափոխականի դժվարություններով լի գործունեությունը զուգակցել գիտականին, անխոնջ պրպտումներին և իր պատվավոր տեղը գրավել հայ ժողովրդի արժանավոր զավակների շարքում։ Աշ. Հովհաննիսյանը 1906 թ. մտնում է ՌՍԳԲ(բ)Կ շարքերը, հարում նրա բոլշևիկյան ուղղությունը և մինչև կյանքի վերջը հավատարիմ մնում նրան։ Նա բարձրագույն կրթություն է ստացել Ենայի, Հալլեի և Մյունխենի համալսարաններում, ստացել խոր գիտելիքներ, տիրապետել մի շարք լեզուների։ Պատմափիլիսոփայական ու բանասիրական լայն ու խոր գիտելիքները, լեզուների հիմնավոր իմացությունը, նշեց զեկուցողը, այն ամուր հիմքն էր, որի վրա Աշ. Հովհաննիսյանը բարձրացավ որպես լայն պրոֆիլի հայագետ և շուրջ 60 տարի բեղմնավոր գիտական գործունեություն ծավալեց։

Աշ. Հովհաննիսյանի գիտական գործունեությունը, շարունակեց զեկուցողը, փաստորեն բաժանվում է երկու փուլի։ Առաջինն ամփոփվում է գիտական ասպարեզ մտնելուց՝ 1910-ական թվականների սկզբներից մինչև 1930-ական թվականների կեսերն ընկած ժամանակաշրջանում, իսկ երկրորդը սկսվում է 1950-ական թվականների սկզբներին և հարատևում մինչև նրա կյանքի վերջը, սակայն նրա թե գիտական և թե գործնական աշխատանքները մի ամբողջություն են կազմել, լրացնելով մեկը մյուսին։ Տարբեր գարաշրջանների նվիրված և տարբեր ժամանակներում գրված նրա յոթանասունից ավելի ուսումնասիրությունների առանցքը հստակորեն կազմել է հայ ժողովրդի ազատագրական գաղափարախոսության, նրա ազգային ու սոցիալական ազատագրության խնդիրը։ Աշ. Հովհաննիսյանը իր ամբողջ ուժն ու եռանդն անմնացորդ նվիրեց աշխատավորների վեհ նպատակների կենսագործմանը։

Այնուհետև զեկուցողն անդրադարձավ Աշ. Հովհաննիսյանի գիտական ժառանգությանը։ Վերջում Վ. Բարխուդարյանը նկատեց, որ հասարակական կյանքի հեղաբեկումներին ու մակընթացություններին ենթակա իր անձնական կյանքը Աշ. Հովհաննիսյանն իր կյանքը ապրեց մաքուր խղճով, մշտապես հավատարիմ իր սկզբունքներին։ Նա սովետահայ պատմագիտությունը հարստացրեց մնայուն գործերով, որոնք մտնում են հայագիտության ոսկե ֆոնդը և նրանց հեղինակին կանգնեցնում հայ պատմագիտության խոշորագույն դեմքերի շարքում։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է. Ջրբաշյանի զեկուցումը նվիրված էր «Ա. Գ. Հովհաննիսյանը և նալբանդյանագիտության ժամանակակից հարցերը» թեմային։ Նա ասաց, որ Աշ. Հովհաննիսյանի անունը ոչ միայն անխզելիորեն կապված է

Միքայել Նալբանդյանի անվան հետ, այլև նրան է պատկանում նալբանդյանագիտության ամենամեծ երախտավորի դափնին, որը նա նվաճել է իր կապիտալ գործերով։ Նալբանդյանագիտության մեջ ոչ մի առաջընթաց հնարավոր չէ՝ առանց հաշվի առնելու մեծ դիտնականի վաստակը, առանց հենվելու նրա վրա կամ թեկուզ հակադրվելու նրա դրույթներին։ Աշ. Հովհաննիսյանի աշխատությունների ամենաբնորոշ կողմը գիտական ռեալիզմն է՝ ամեն մի եզրակացություն միմիայն փաստերից բխեցնելու սկզբունքը։

Ժամանակը, շարունակեց զեկուցողը, որոշ ճշգրտումներ է մտցնում դիտնականի հարցադրումների մեջ, և դա միանգամայն բնական է։ Իսկական գիտնականի գիտական ժառանգությունը քարացած ճշմարտությունների հավաքածու չէ, այլ կյանքի հետ շարժվող ու զարգացող գործ։ Ժամանակը մտցրել է և կմտցնի իր ճշտումները Աշ. Հովհաննիսյանի գնահատականների մեջ։ Սակայն անվիճելի է, որ գիտնականն իր հիմնական խնդրի լուծման մեջ ընթանում էր ճիշտ ուղղությամբ՝ որոշելով պատմական խոշոր անհատների իրական տեղը դարաշրջանի հասարակական և գաղափարական հարաբերությունների բարդ շղթայում։ Այն հանգամանքը, որ նալբանդյանագիտությունը շարունակում է զարգանալ և հասարակական լայն հետաքրքրություն հարուցել, խոշոր չափով պետք է համարել Աշ. Հովհաննիսյանի ծառայությունը, որը մեր գիտության այդ ճյուղը դրեց փաստական և մեթոդական ամուր հիմքերի վրա։

Վերջում է. Ջրբաշյանը նկատեց, որ ժամանակը մեզ օգնում է ավելի լավ հասկանալու ոչ միայն Աշ. Հովհաննիսյանի աշխատությունների արժեքը, այլև նրա մեծությունը։ Նրա գիտական բարձր սկզբունքայնությունը և իր գործին անմնացորդ նվիրումը այսօր մեզ համար ունեն բարոյական և դաստիարակիչ մեծ նշանակություն։

Այդ վսեմ հատկանիշներով էլ Աշ. Հովհաննիսյանի անունը մտնում է իր կյանքի երկրորդ հարյուրամյակը։

Բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Մխիթարյանն իր զեկուցման մեջ անդրադարձավ հայ պարբերական մամուլի պատմության ուսումնասիրման գործում Աշ. Հովհաննիսյանի ներդրած մեծ վաստակին։ Նա նշեց, որ «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրության մեջ Աշ. Հովհաննիսյանը հանգամանորեն քննության առնելով և բնութագրելով անցյալ դարի 60-ական թվականների հայ հասարակական հոսանքները, միաժամանակ սպառիչ գնահատականներ է արվել ժամանակի երկու հատվածների հայ պարբերական մամուլի մի շարք օրգանների գործունեությանը։ Նա լուսաբանել է ժուռնալիստիկայի պատմության հետ կապված այնպիսի կարևորագույն պրոբլեմներ, ինչպիսիք են թերթերի քաղաքական ուղղությունը, բանավեճերի բնույթը, լրագրողների հրապարակախոսական վարպետության հարցերը և ժուռնալիստական աշխատանքի մեթոդները, գրաքննության հետ պարբերաթերթերի ունեցած առնչությունները և այլն։ Զեկուցողը նշեց «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրության բացառիկ դերը XIX դ. հայ մամուլի պատմության ստեղծման գործում։

Մ. Մխիթարյանը կանգ առավ նաև 1860-ական թվականների հայ խոշոր հրապարակախոսներ Մ. Նալբանդյանին, Ստ. Նազարյանին և ի. Պատկանյանին՝ Աշ. Հովհաննիսյանի տված գնահատականների վիճահարույց խնդրի վրա, ինչպես նաև շեշտեց Աշ. Հովհաննիսյանի թողած մեծարժեք ավանդների պահպանման անհրաժեշտությունը։

Այնուհետև Աշ. Հովհաննիսյանի մասին հուշերով հանդես եկավ գրող Ս. Խանզադյանը։

Գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Առաքելյանը։